Հավելված N 2
ՀՀ կառավարության
2024 թվականի ------- -- -ի
N --- -Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի տաղանդների զարգացման» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրի՝ որպես անձեռնմխելի կապիտալ տրամադրված կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք»), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «Օրենք»), սույն կանոնադրության և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումների համաձայն:

2. Հիմնադրամի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի տաղանդների զարգացման» հիմնադրամ.

2) հայերեն կրճատ՝ «ՀՏԶ» հիմնադրամ.

3) անգլերեն լրիվ՝ «Talant Development of Armenia» Foundation.

4) անգլերեն կրճատ՝ «TDA» Foundation.

5) ֆրանսերեն լրիվ՝ «Le De′veloppement du Talent de I’Arme′nie» FOND.

6) ֆրանսերեն կրճատ՝ FOND «DTA».

7) ռուսերեն լրիվ՝ ФОНД «Развития талантов Армении».

8) ռուսերեն կրճատ՝ ФОНД «РТА»:

3. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ք. Երևան------- :

4. Հիմնադրամի գործունեության ժամկետը սահմանափակված չէ:

5. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

6. Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

7. Հիմնադրամն կարող է ունենալ խորհրդանիշ, իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

8. Հիմնադրամի գործունեության նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում՝

1) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում բացառիկ ընդունակություններ ունեցող անձանց բացահայտումը և նրանց ընդունակությունների զարգացումն ու տաղանդների խթանումը,

2) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում մատչելիության և հավասար մասնակցության հնարավորության ապահովումը,

3) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում բացառիկ ընդունակություններ ունեցող անձանց բացահայտման և նրանց ընդունակությունների զարգացման արդյունավետ գործիքակազմերի մշակումը, փորձարկումն ու ներդրումը և շարունակական զարգացումը,

4) կրթական նոր, նորարարական ծրագրերի և տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը,

5) բացառիկ ընդունակությունների զարգացման նպատակով՝ անհրաժեշտ միջավայրերի ապահովումը, այդ թվում՝ կրթական, գիտական, մշակութային և սպորտային ենթակառուցվածքների ստեղծումը, զարգացումը և պահպանումը,

6) ազգային միտված և հեռանկարային զարգացման պահանջներին համապատասխան գիտելիքի և կարողությունների զարգացումը,

7) սույն որոշման հավելված 1-ով հաստատված «Տաղանդների զարգացման ծրագրի» հայեցակարգով նախատեսված գործառույթների իրականացումը:

9. Հիմնադրամի գործունեության նպատակներից ելնելով՝ Հիմնադրամի հիմնական շահառու կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում գործող կրթական հաստատություններում սովորողները, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ սույն կետում չներառված ֆիզիկական անձինք, որոնք դրսևորում են բացառիկ ընդունակություններ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներից որևէ մեկում:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԿԱՊԻՏԱԼԸ

10. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է վերջինիս պետական գրանցման պահից և դադարում է լուծարման պահից:

11. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում համապատասխան պարտականություններ:

12. Իր նպատակների իրականացման համար Հիմնադրամը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործունեություն:

13. Իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար և դրանց համապատասխան Հիմնադրամն, ի թիվս այլնի, իրավունք ունի՝

1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,

2) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ,

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,

4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ,

5) համագործակցել Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և կազմակերպությունների, Հիմնադրամին համանման այլ կազմակերպությունների հետ,

այդ թվում՝ օտարերկրյա և միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային և օտարերկյա ոչ կառավարական կազմակերպություններին,

6) համագործակցել Սփյուռքի համայնքային կառույցների և առանձին անհատների հետ,

7) կնքել պայմանագրեր, համագործակցության և գործընկերության փոխըմբռնման հուշագրեր և այլ փաստաթղթեր,

8) սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար անհրաժեշտ այլ գործունեության իրականացումը:

14. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, կարող է ունենալ Հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր Հիմնադրի պարտավորությունների համար:

15. Հիմնադրամն անձեռնմխելի կապիտալի և սույն կանոնադրության 14-րդ և 19-րդ կետերով նախատեսված դրամական միջոցների և գույքի համար վարում է առանձնացված հաշվառում՝ դրանց վերաբերյալ տեղեկությունները ներառելով իր կողմից ներկայացվող հաշվետվություններում:

16. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր կանոնադրական նպատակներին համապատասխան և հաշվի առնելով սույն կանոնադրությամբ նախատեսված սահմանափակումները:

17. Հիմնադրամն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող կողմ:

18. Հիմնադրամը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում,

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, դրամով և (կամ) արտարժույթով:

19. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Հիմնադրի ներդրումը,

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

3) դրամական մուտքերը պետական բյուջեից,

4) դրամաշնորհները,

5) հանգանակությունները, միջոցներ, որոնք ստացվում են դրանց ներգրավմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճանքի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

6) իր կողմից աջակցություն ստացած նախաձեռնություններում ունեցած բաժնեմասերից գեներացված միջոցները,

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

20. Հիմնադրամի հիմնադրման պահին Հիմնադրի կողմից որպես անձեռնմխելի կապիտալի սկզբնական միջոցներ տրամադրվում է հինգ միլիարդ ՀՀ դրամ:

21. Հիմնադրամի անձեռնմխելի կապիտալը չի կարող ծախսվել կամ որևէ կերպ օտարվել՝ հանգեցնելով դրա անվանական արժեքի նվազմանը:

22. Հիմնադրամի անձեռնմխելի կապիտալի կազմում կարող են ընդգրկվել բացառապես դրամական միջոցներ:

23. Հիմնադրամի անձեռնմխելի կապիտալը համարվում է ձևավորված հիմնադրամի բանկային հաշվին դրամական միջոցներ փոխանցելու պահից:

24. Անձեռնմխելի կապիտալը կարող է հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ համալրվել դրա կառավարումից ստացվող եկամուտների հաշվին:

25. Հիմնադրամի անձեռնմխելի կապիտալը կարող է կառավարվել բացառապես ՀՀ պետական պարտատոմսերում ներդրումներ կատարելու, դրանց տոկոսավճարներից և

մարումից եկամուտներ ստանալու և ստացված եկամուտները տարեկան ծրագրին համապատասխան օգտագործելու միջոցով:

26. Հիմնադրամի հաշվին և հանձնարարությամբ ներդրումներ կատարելու դեպքում՝ ձեռք են բերվում պետական այնպիսի պարտատոմսեր, որոնք ձեռք բերման պահի դրությամբ ապահովում են առավել բարձր եկամտաբերություն:

27. Անձեռնմխելի կապիտալի համար Հիմնադրամը ՀՀ կենտրոնական բանկում բացում է առանձին բանկային հաշիվ և վարում է առանձնացված հաշվառում՝ դրանց վերաբերյալ տեղեկություններն արտացոլելով Խորհրդին և Օրենքով սահմանված դեպքերում ներկայացվող մյուս հաշվետվություններում: Հիմնադրամը կարող է բացել ենթահաշիվներ՝ Հիմնադրի և յուրաքանչյուր նվիրատուի տրամադրած միջոցների համար:

28. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամտի երեք տոկոսը, անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին համապատասխան, տրամադրվում է շահառուներին, իսկ մնացած մասն ուղղվում անձեռնմխելի կապիտալի համալրմանը:

29. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

30. Հիմնադրամի կառավարման մարմիններն են Խորհուրդը և գործադիր մարմինը (այսուհետ՝ «Կառավարիչ»):

31. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

32. Խորհուրդը կազմված է ինը անդամից, որից՝ չորսն ի պաշտոնե անդամներ, և երեքը՝ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի կամ մարդասիրական ոլորտում

հեղինակավոր անհատներ, և երկուսը՝ կառավարման, ֆինանսական և իրավական փորձառությամբ մասնագետներ:

33. Ի պաշտոնե Խորհրդի անդամներին ներկայացնում է Հիմնադիրը:

34. Խորհրդի կազմում ներգրավվող կրթության, գիտության, մշակույթի, սպորտի կամ մարդասիրական ոլորտում հեղինակավոր անհատներին ներկայացնում է կրթության կառավարման պետական լիազոր մարմինը, կառավարման, ֆինանսական և իրավական փորձառությամբ մասնագետներին՝ ֆինանսների ոլորտի պետական լիազոր մարմինը:

35. Խորհրդի առաջին կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, կազմի հետագա փոփոխությունները՝ խորհրդի կողմից, ձայների մեծամասնությամբ քվեարկության արդյունքում:

36. Խորհրդի անդամներն ընտրվում են առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով:

37. Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

38. Խորհրդի նախագահը և անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Խորհուրդը:

39. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնելու Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

2) նախապատրաստելու և Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,

3) ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,

4) ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

40. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել Խորհրդի նիստերին,

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից:

41. Սույն կանոնադրության 31-րդ կետում նշված ի պաշտոնե Խորհրդի անդամ հանդիսացող անձի լիազորությունները համարվում են դադարած՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ ընտրելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման մասին լիազորված մարմնի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

42. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) եթե նա Խորհրդի անդամ է ի պաշտոնե, նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում.

2) Խորհրդի անդամի՝ Խորհրդի նախագահին ուղղված գրավոր դիմումի հիման վրա.

3) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների 3/4-ով.

4) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

5) եթե դադարել են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչելու դեպքում.

7) նրա մահվան դեպքում:

43. Ի պաշտոնե Խորհրդի անդամ չհանդիսացող Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ ընտրվում է՝ սույն կանոնադրության 35-րդ կետով նախատեսված կարգով, ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Կառավարչի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Կառավարիչն այդ ծանուցումն ուղարկում է Հիմնադրին, Խորհրդի նախագահին, անդամներին անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:

44. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

2) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, վարչակառավարչական ծախսերի չափի, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

3) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

4) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

5) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,

6) Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

7) Խորհրդի նախագահի, Կառավարչի, վերստուգիչի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը,

8) Հիմնադրամի՝ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը,

9) Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրությունը Հիմնադրի հաստատմանը ներկայացնելու մասին որոշումների ընդունումը,

10) առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

11) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,

12) կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Կառավարչի հաշվետվությունների լսումը,

13) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

14) Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,

15) Հիմնադրամի կառուցվածքի հաստատումը,

16) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

17) Հիմնադրամի դրամական միջոցների տեղաբաշխման ձևերի, ուղղությունների և սահմանաչափերի հաստատումը, անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը և դրա լրացումների կամ փոփոխությունների հաստատումը,

18) յուրաքանչյուր տարի Հիմնադրամի աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպության ընտրությունը,

19) Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

45. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

46. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդն իրավասու է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ:

47. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

3) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը,

4) ստորագրում է Խորհրդի որոշումները և արձանագրությունները,

5) Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

48. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ նրա պարտականությունները, Խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

49. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

50. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի նիստերում քվեարկության ժամանակ նրա յուրաքանչյուր անդամն ունի մեկ ձայնի իրավունք:

51. Խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անդամները:

52. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել, իսկ որոշումները կայացվել հեռավար հարցման կարգով:

53. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

54. Հիմնադրամի Կառավարչի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և սույն կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

55. Խորհրդի նիստերին մասնակցում են նաև Կառավարիչը և վերստուգիչը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի նախագահի հրավերով խորհրդի նիստերին կարող են մասնակցել նաև այլ անձինք:

56. Խորհուրդը կարող է ունենալ պատվավոր անդամներ:

57. Խորհուրդը կարող է իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհել նաև Հիմնադրամի գործունեությանը և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց և բարձր հեղինակություն վայելող անհատներին:

58. Խորհրդի նախագահի հրավերով Խորհրդի պատվավոր անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են Խորհրդի նիստերին:

59. Խորհրդի պատվավոր անդամների լիազորությունները կարող են դադարել նրա մահվան, դատարանի օրինական վճռով անգործունակ ճանաչվելու դեպքերում: Անձը կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել Խորհրդի պատվավոր անդամի կոչումից՝ Խորհրդի նախագահին այդ մասին գրավոր ծանուցելու միջոցով:

60. Հիմնադրամն ունի վերստուգիչ (այսուհետ՝ Վերստուգիչ): Վերստուգիչն իրականացնում է Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, կամ Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

61. Վերստուգիչն իրավունք ունի պահանջել Խորհրդի արտահերթ նիստի գումարում:

62. Վերստուգիչի պահանջով նրան պետք է ներկայացվեն Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:

63. Վերստուգիչին ընտրում է Խորհուրդը՝ երեք տարի ժամկետով:

64. Վերստուգիչը հաշվետու է Խորհրդին:

65. Վերստուգիչի վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Խորհրդի որոշմամբ:

66. Վերստուգիչ կարող է լինել Հիմնադրամի կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

67. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի Կառավարիչը:

68. Կառավարիչն ընտրվում է Խորհրդի կողմից՝ երեք տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով:

69. Կառավարչի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և իր հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից Կառավարչի հետ պայմանագիրը ստորագրվում է Խորհրդի նախագահի կողմից:

70. Կառավարիչը՝

1) կազմակերպում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը.

2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա տարածքից դուրս,

3) սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից,

4) իրականացնում է անձեռնմխելի կապիտալի կառավարումը, կնքում է ծառայությունների մատուցման պայմանագրեր և վերահսկում է դրանց կատարումը,

5) գործում է Հիմնադրամի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

6) սահմանված կարգով Հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

7) կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը,

8) Հիմնադրամի համար բացում է բանկային հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

9) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

10) իր իրավասության շրջանակներում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11)սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,

12) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

13) տարին առնվազն մեկ անգամ Խորհրդին է ներկայացնում Հիմնադրամի գործունեության մասին հաշվետվություն,

14) ձեռնարկում է Խորհրդի նախագահի որոշումների կատարմանն ուղղված միջոցառումներ:

71. Կառավարիչը որոշումներն ընդունում է ինքնուրույն՝ ելնելով Խորհրդի որոշումներից և Հիմնադրամի շահերից:

72. Կառավարիչը կարող է կատարել վճարովի այլ աշխատանք միայն Խորհրդի համաձայնությամբ: Սույն կետով նախատեսված սահմանափակումը չի կիրառվում Կառավարչի կողմից մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական աշխատանքով զբաղվելու դեպքերում:

73. Խորհուրդը կարող է ցանկացած պահի լուծել Կառավարչի հետ ստորագրված աշխատանքային պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և վերջինիս հետ ստորագրված աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

74. Հիմնադրամը Խորհրդի որոշմամբ սահմանված կարգով կարող է ունենալ նաև խորհրդակցական մարմին՝ ի դեմս Նվիրատուների ժողովի: Նվիրատուների ժողովը

ձևավորվում է Հիմնադրամին սահմանված կարգով նվիրատվություն իրականացրած անձանցից Հիմնադրամի ձևավորումից հետո մեկ տարվա ընթացքում:

75. Նվիրատուների ժողովը կարող է գումարել նիստեր՝ առկա կամ հեռավար եղանակով: Նվիրատուների ժողովի նիստերը վարում է տարիքով ավագ անդամը, նրա բացակայությամբ՝ ժողովի ընտրության ժողովի անդամներից որևէ մեկը:

76. Նվիրատուների ժողովը կարող է քննարկել և առաջարկներ ներկայացնել Հոգաբարձուների խորհրդին և կառավարչին՝ իրականացվող ծրագրերի, ընտրված գործիքակազմերի, ռազմավարական ուղղությունների վերաբերյալ:

77. Նվիրատուների ժողովի ներկայացուցիչները կարող են հրավիրվել Հոգաբարձուների Խորհրդի նիստերին:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

78. Հիմնադրամի տարեկան ծրագիրը ներառում է՝

1) տվյալ տարվա ընթացքում իրականացվող՝ Հիմնադրամի կանոնադրական նպատակները,

2) կանխատեսվող եկամուտները և ծախսերը,

3) նախատեսվող միջոցառումները,

4) շահառուները,

5) շահառուների միջև անձեռնմխելի կապիտալից ստացված եկամուտների բաշխման կարգը և համամասնությունները,

6) վարչակառավարչական տարեկան ծախսերի ֆինանսավորման չափը,

7) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ:

79. Անձեռնմխելի կապիտալի եկամուտներն օգտագործելու տարեկան ծրագիրը, ինչպես նաև դրանում կատարված լրացումները և փոփոխությունները Խորհրդի կողմից ընդունվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, հրապարակվում է հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

80. Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողությունն և Հիմնադրամի գործունեության հրապարակայնությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

81. Հիմնադրամը ունի պաշտոնական կայք, որը պետք է հանրությանը հասանելի դարձվի սույն կանոնադրության գրանցման պահից եռամսյա ժամկետում:

82. Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են աուդիտի՝ Խորհրդի կողմից ընտրված միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Տարեկան աուդիտորական եզրակացությունը ենթակա է հրապարակման Հիմնադրամի պաշտոնական կայքում: Արգելվում է Խորհրդի կողմից Հիմնադրամի աուդիտի իրականացումը վերապահել միևնույն աուդիտորական կազմակերպությանը երեք տարի անընդմեջ:

83. Հիմնադրամը յուրաքանչյուր տարի իր պաշտոնական կայքում հրապարակում է նախորդող տարվա ընթացքում Հիմնադրամի անձեռնմխելի կապիտալի ձևավորման, համալրման, անձեռնմխելի կապիտալի ներդրման ուղղությունների, տեսակի, ժամկետայնության, եկամտաբերության, անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված և բաշխված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն:

84. Հիմնադրամի նվիրատուները (կտակի դեպքում՝ նաև կտակարարի ժառանգները և կտակակատարները, իսկ վերակազմակերպված իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավահաջորդը) իրավունք ունեն Հիմնադրամից պահանջելու տեղեկություններ՝ Հիմնադրամի կանոնադրության, անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրի, անձեռնմխելի կապիտալի ձևավորման, համալրման, անձեռնմխելի կապիտալի ներդրման ուղղությունների, տեսակի, ժամկետայնության, եկամտաբերության, անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված և բաշխված դրամական միջոցների, ինչպես նաև աուդիտորի եզրակացության վերաբերյալ: Կառավարիչը պարտավոր է պահանջված տեղեկություններն անվճար տրամադրել դիմողին՝ պահանջի ստացման օրվանից 7-օրյա ժամկետում:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

85. Օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի գույքը փոխանցվում է նվիրատուներին՝ նրանց կողմից հիմնադրամին տրամադրված միջոցների չափին համապատասխան, սակայն ոչ ավելի, քան նվիրաբերած գումարը, իսկ դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

86. Հիմնադրամը չի կարող վերակազմակերպվել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

87. Սույն կանոնադրության 8-րդ, 9-րդ, 32-38-րդ, 86-րդ և 87-րդ կետերը փոփոխման ենթակա չեն:

88. Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

89. Կանոնադրությունը կազմված է երկու օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Տարընթերցման դեպքում հայերեն լեզվով տարբերակը գերակայում է:

90. Սույն Կանոնադրության մեջ փոփոխությունները կարող են կատարվել Հիմնադրի կողմից կողմից: